Զորբորդ. ծավալել սեփական սխալների քննազատությունը և վոչ թե կոծկել դրանք, չճողոպրել դրանցից, ինչպես այդ հաճախ լինում ե մեղանում : Աղնվորեն և բացահայտ կերպով ընդունել իր սխալները, դրանք ուղղելու ճանապարհները նշել աղնըլորեն և բացահայտ կերպով, այդ սխալներն ուղղել աղնըլորեն և բացահայտ կերպով—ահա թե ինչ պետք ե պահանջնել յուրաքանչյուր կոմյերիտական ակտիվիտեցից : Վոմանք վախենում են, վոր թշնամիները, ամեն տեսակ յերկերեսանիները կփորձնեն մեր գեմ ոգտագործել քննադատությունը և ինքնաքննադատությունը : Սակայն մենք ձեզ հետ միասին, ընկերներ՝ չերինք լինի յերիտասարդության քաղաքական դեկալարներ, յեթե վախենայինք դրանից և դրա համար չծավալեյինք ինքնաքննադատությունը : Պետք ե ջախջախիչ հակառարված տալ թշնամիների ամենաչնչին վոտընձություններին և ինքնաքննադատությամբ ամրապնդել մեր շարքերը : Պետք ե առաջին հերթին ինքնաքննադատությամբ և քննադատությամբ ամրապնդել կոմյերիտական ակտիվիք :

Հինգերորդ. լիկվիդացիայի յենթարկել կոմիտեների անդամության կոռպուցիաների պրակտիկան և ամրողնովին վերականգնել կոմյերիտականների համար որդանների ընտրովիությունը :

Վեցերորդ. կոմյերիտամիության դեկալար որդանների ընտրությունների ժամանակ արգելել ցուցակներով քվեարկումը և վերականգնել առանձին թեկնածությունների քվեարկումը, կոմյերիտականների համար ապահովելով թեկնածուներին մերժելու և նրանց քննադատելու անսահմանափակ իրավունքը :

Յոթերորդ. կոմյերիտական որդանների ընտրության ժամանակ սահմանել փակ (գաղտնի) քվեարկություն, ոկոսած ոկղունական կազմակերպության կոմիտեյից մինչև Կենտրոնական կոմիտեն :

Ենի, վերջապես, մեզ հարկավոր ե ամբողջովին վերականգնել կոմյերիտական կոմիտեների, դեկալար ակտիվի պարբերական հաշվետվությունը կոմյերիտականների առաջ — մեր միության կանոնադրության համապատասխան :

II. ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՐՏՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բոլքեիզմին տիրապետելու խնդիրը, վոր առաջազրել և ընկեր Ստալինը Համկ(բ)կ կենտկոմի պլենումում, կոմյերիտմիության համար հանգիստանում և դիմավոր խնդիր։ Մեր յերիտասարդությունը նվիրված է իր հայրենիքին, մեր բոլքեիկան կուսակցությանը։ Սակայն նա, այդ յերիտասարդությունը քաղաքականապես և կենսականորեն բավականաչափ կովկած չէ։ Թշնամիները հաշվի յեն առնում այդ և փորձում են մոտենալ յերիտասարդությանը, նրա դիմակցությունը թունավորել իրենց աղղեցության թույնով։ Եեվ այնտեղ, ուր նրանց հաջողվում և սողոսկել մեր կաղմակերպությունները, նրանք իրենց դիմերօխանուղում են ամենից առաջ քաղաքական դաստիարակության աշխատանքի դեմ, ձգտում են քայլայել այդ աշխատանքը, վորովհետեւ դիտեն, վոր ինչքան յերիտասարդությունը քաղաքականապես ավելի և լավ և դաստիարակված, այնքան դժվար և թշնամական աղղեցություն ունենալ նրա վրա։ Ահա թե ինչու կարելի յե ասել, վոր կոմյերիտական կաղմակերպությունները չունեն մի ավելի կարեւոր խնդիր, քան բոլցենիզմին տիրապետելու խնդիրը։ Մեր ամրող աշխատանքը պետք է յենթարկի յերիտասարդության և առաջին հերթին կոմյերիտականների քաղաքական դատիքակությանը, այսինքն բոլցենիզմի ուսումնասիրությանը, նրա պատմության և քաղաքականության ուսումնասիրությանը, այդ աշխատանքը կապակցելով գործնական մտսնակցության հետ, վոր յերիտասարդությունն ունի սոցիալիտական շինարարության մեջ։

Քաղաքականապես դաստիարակել յերիտասարդությանը, այդ նշանակում է պայքարել յուրաքանչյուր յերիտասարդի, յուրաքանչյուր կոմյերիտականի կոմունիստական աշխարհայացքի համար։ Հենց պրոպագանդիստական, քաղաքական-դաստիարակչական աշխատանքն է, վոր չի հանդուրժում ընդհանրություն։ այն պետք է հասցեազրվի յուրաքանչյուր յերիտասարդի և վոչ թե ընդհանրապես զայն մասներին։

Մեր խնդիրն է կոմյերիտականներին և ամենից առաջ կոմ-

յերիտական ակտիվին սովորեցնել ըմբռնել աեղի ունեցող դեպ-
քերը, սովորեցնել հասկանալու այդ դեպքերը, դիտենալու մի-
շաղգային դրությունը։ Պետք է յուրաքանչյուր կոմյերիտականի
և ամբողջ յերիտասարդությանը հասկանալի դարձնել, վոր քանի
դեռ կա կապիտալիստական ըրջապատռումը, դոյություն կունենա-
նաւ ԽՍՀ Միության վրա հարձակվելու վտանգը, սոցիալիզմի
թշնամիներն ամեն տեսակ դիմակների տակ մեղ մոտ կուղարկեն
և մեր յերկրի ներսում կհավաքագրեն իրենց դործակալներին —
լրացներին, մարդասպաններին, դիվերսանտներին, վնասա-
բարներին։ Մեր քաղաքական աշխատանքը պետք է կոմյերիտա-
կաններին ու յերիտասարդությանն սպառազինի այդ վտանգների
դեմ պայքարելու, ԽՍՀՄ-ն ակտիվորեն պաշտպանելու համար։

Կոմյերիտամիությունը մինչև այժմ ունի խոշորագույն թե-
րություններ քաղաքական-դաստիարակչական աշխատանքում։
Այդ հարցի շուրջը կոմյերիտամիությունը քանիցս ցուցումներ և
ստացել Համելի (բ)կ կենտկոմից և անձամբ ընկեր Ստալինից։
Մասնավորապես այդ հարցը վերստին դրվեց Համելի (բ)կ կենտ-
րոնական կոմիտեյի և ընկեր Ստալինի կողմից՝ Համելի 10-րդ
համագումարից վոչ շատ առաջ։ Վերջապես, Համելի ԿԿԵՄ
կենտկոմի անցյալ պլենումում ամբողջ սրությամբ դրվեց կոմ-
յերիտամիության մեջ կատարվող քաղաքական և պրոլաբանդիս-
տական աշխատանքի հարցը։

Սակայն այդ բոլորը դեռ չի կատարված։ Կոմյերիտամիու-
թյան ղեկավար կոմիտեները մինչև որս ել շարունակում են մի
կողմը մնալ քաղաքական և պրոլաբանդիստական աշխատանքից։

Այսպես, որինակ, կոմյերիտամիության Գորկու յերկրկոմը,
1936 թվականին, բյուրոյի նիստերում քննարկել և 242 հարց։
Դրանցից քաղոււսուցմանը և պրոպագանդիստաների հետ կատար-
վող աշխատանքին վերաբերում և հինգ հարց, արտամիութենա-
կան յերիտասարդության մեջ կատարվող աշխատանքին — վոչ
մի հարց, մասսայական-քաղաքական աշխատանքին — 14, աշա-
կերառության և ուսանող յերիտասարդության մեջ կատարվող
աշխատանքին — 2, և ոկրնական կազմակերպություններում
կատարվող դաստիարակչական աշխատանքին — 4։

Ահա թե կոմյերիտամիության Գորկու յերկրկոմը և նրա ղե-
կավար ընկ. Բելորորողովն ինչպես են «կատարում» կուսակցու-
թյան և կոմյերիտամիության 10-րդ համագումարի վորոշումները՝
կոմյերիտամիության մեջ քաղաքական-դաստիարակչական աշխա-
տանք տանելու մասին։

Մոտավորապես այդ նույն ժամանակամիջոցում Բելոռուսիայի կոմյերիտմիության կենտրոնը բյուրոյի նիստերում քննարկել է 274 հարց : Դրանցից 20-ը վերաբերում են քաղուսուցման և պրոպագանդիստների հետ կատարվող աշխատանքին, 30-ը՝ մասսայական-քաղաքական աշխատանքին և 4-ը՝ սկզբնական կազմակերպություններում կատարվող դաստիարակչական աշխատանքին :

Որչոնիկիձեյի յերկրկոմի բյուրոյում, այդ նույն ժամանակամիջոցում, քննարկված է 185 հարց : Դրանցից 9-ը՝ քաղուսուցման և պրոպագանդիստների հետ կատարվող աշխատանքի և 14-ը՝ մասսայական-քաղաքական աշխատանքի մասին :

Առանձնապես աչքի յե ընկել Տաղիկստանի կոմյերիտմիության կենտրոնը : Բյուրոյի և քարտուղարության նիստերում քըննարկված 473 հարցերից միայն 14-ն են վերաբերում քաղուսուցման ու պրոպագանդիստների հետ կատարվող աշխատանքին և 23-ը՝ մասսայական-քաղաքական աշխատանքին :

Քաղաքական դաստիարակությանը և կոմյերիտմիության մեջ կատարվող պրոպագանդիստական աշխատանքին գրանից ավելի ուշադրություն չի դարձնում նաև Զելյարինսկի մարզկոմը :

Տրոյիցկայա կայարանի դեպոյի 400 յերիտասարդներից քաղաքիտության խմբակներում սովորում են միայն 4 հոգի : Տրոյիցկ քաղաքի կաշեղործարանի 600 յերիտասարդներից քաղուսուցման զբաղվում են միայն 13 հոգի վոչ-միութենական յերիտասարդություն : Մագնիտոգորսկի 35 հազար յերիտասարդներից կոմյերիտական դպրոցներում սովորում են միայն 753 հոգի վոչ-միութենական յերիտասարդություն :

Ի դեպ ասած՝ կոմյերիտմիության Զելյարինսկի մարզկոմը բոլորովին չի զբաղվում նաև յերիտասարդության դաստիարակության մյուս հարցերով, որինակ՝ բարակներում և հանրակացարաններում կատարվող աշխատանքով, Փիզկուլտուրային աշխատանքով :

Բնորոշ ե, վոր Զելյարինսկի մարզկոմի բյուրոյում և քարտուղարության մեջ 1936—37 թ.թ. քննարկված 436 հարցերից միայն յերկուսն են վերաբերում քաղուսուցման, 2-ը՝ պիոներների մեջ կատարվող աշխատանքին, 3-ը՝ անզբագիտության վերացման և աղիտացիոն աշխատանքին : Ճիշտ ե, Զելյարինսկի մարզկոմի աշխատողները հաճախ լինում են տեղերում, սակայն զբանից վոչ մի արդյունք չի ստացվում : Նույն Տրոյիցկի շրջա-

նում, վերջին տարվա ընթացքում յեղել են մարզկոմի 11 հրահանգիչները, սակայն նրանք բոլորն անտեսել են կազմակերպության մեջ յեղած հիվանդագին յերևույթները: Ուժակեվսկի ուսունում յեղել են 13 աշխատողներ, վորոնց թվում նաև մարզկոմի քարտուղար ընկ: Բառկինը: Այնուամենայնիվ շրջանային կազմակերպությունը հասել է բոլորովին անուշադրության մատնըված դրության:

Մենք բոլոր հիմքերն ունենք պնդելու, վոր շատ կոմիտեներ դրադվում են ինչով ուղեք, բացի քաղաքական դաստիարակությունից և պրոպագանդիստական աշխատանքից:

Մարզկոմների աշխատանքում յեղած անճիշտ պրակտիկան իր արտացոլումն ե գտնում նաև շրջանային կոմիտեների աշխատանքում: Յես կրերեմ մի քանի որինակ: Կույրիշեվի մարզի Կինել-Զերկասյան շրջանում 1936 թվականի մայիսից մինչև 1937 թվականի փետրվարը բյուրոյում քննարկված ե 39 հարց, վորոնցից յոթը վերաբերում են պրոպագանդային և վեցը՝ մասսայական-քաղաքական և կուլտուրական աշխատանքին:

Վորոնեժի մարզի Կանտեմիրի շրջանում քննարկված ե 67 հարց, վորոնցից 8-ը վերաբերում են պրոպագանդային, 10-ը մասսայական-քաղաքական և կուլտուրական աշխատանքին: Կարելի յեշ շատ այդպիսի որինակներ բերել: Ի դեպ տասձ՝ դրանք վատ շրջկոմները չեն:

ԼԻԱՆ.ՄԱԱԽԻԱՅԻ ՅԵՂԱՐԿՈՒՅԻ ՎՈԶ-ԿՈՒՍԱԿԱՎԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ
ԴԵԳԻ ԳՐՈՊԱԴԱՆԴԻՍՏԱՎԱՆ ԱԵԽԱՏԱՆՔ

1 Կոմիերիտական ղեկավար աշխատողները և առաջին հերթին քարտուղարական կազմը դեռևս պրոպագանդիստական աշխատանք չեն կատարում, չեն ղեկավարում այն:

Արևելյան Սիրիբի յերկրային կազմակերպությունում կա կոմիերիտմիության 300 վճարովի աշխատող, նրանցից միայն 50-ն են պրոպագանդիստական աշխատանք կատարում: Մյուս կազմակերպությունների համեմատությամբ, այդ վատ որինակը չե: ղեկավար ակտիվի թվում յեղած պրոպագանդիստները դեռևս հաշվվում են միավորներով:

Ավելին, մենք անթույլատրելիորեն վատ ենք ոգտագործում կոմիերիտմիության մեջ ստեղծված վճարովի պրոպագանդիստական ապարատը: Կոմիերիտմիության մարզկոմներում և շրջկոմներում աշխատում են ավելի քան 2 հազար վճարովի պրոպագան-

դիտաներ : Այդ ընկերների մեծամասնությունն ուղղում է ազնվորեն կատարել պրոպագանդիստական աշխատանքը, սակայն կոմիտեների քարտուղարները հաճախ խանդարում են նրանց : Համ . ԼՂՅԵՄ կենտկոմը համոզվել է դրանում : Խանդարում են նրանով, վոր հաստիքային պրոպագանդիստներին ողտազործում են գլխավորապես ընդհանուր աշխատանքի համար :

ՀամԼՂՅԵՄ կենտկոմի պլենումի վորոշման համաձայն, ժարդկոմները պրոպագանդայի հրահանգիչներ են վերցրել : Դեռևս մենք չերինք հաստատել այդ ընկերներին, յերբ նրանցից բողոքներ տեղացին այն մասին, թե ժարդկոմների և յերկրկոմների քարտուղարները նրանց ծանրաբեռնում են ընդհանուր աշխատանքով, դարձնում են սովորական հրահանգիչներ :

Գործը լավ չե նաև շրջաններում : Շրջկոմների պրոպագանդիստներն իրենց ժամանակի կեսից ավելին անց են կացնում գյուղերում : ՀամԼՂՅԵՄ կենտկոմը հառկապես ընկերներ և ուղարկել այդ ստուգելու Վորոնեժի, Արևմտյան մարզի և այլ կազմակերպություններում : Պարզվել է, վոր պրոպագանդիստները ամիսը մոռագլորապես 14 որ զանվում են գյուղերում : Մշացած ժամանակն անց են կացնում շրջանային կոմիտեյում, կարգարելով այնպիսի աշխատանք, վորը յերբեմն բոլորովին կապ չի ունենում պրոպագանդայի հետ :

Իսկ յեթե հաստիքային պրոպագանդիստը գնում է գյուղ քաղաքապմունք անցկացնելու, ապա շրջկոմի քարտուղարը մասնակում նրան ծանրաբեռնելու զանազան ընդհանուր առաջադրություններով : Շրջկոմի հաստիքային պրոպագանդիստին ցմիաժամանակը ուղտագործում են և՛ լուսբաժինը, և ՊԱԶԲ-Ալիխաքիւմը, և՛ Փիլիկուլտուրայի գործերի կոմիտեն, և՛ շրջանային ուրիշ կազմակերպություններ :

Մի՞թե մենք վերջիներջո չենք կարող ճիշտ կազմակերպել թեկուղ այդ 2 հազար պրոպագանդիստների աշխատանքը : Չե՞ վոր այդ այնքան ել դժվար չե : Այդ վերջապես կարելի յե և պետք ե անել :

Բացի այդ պրոպագանդիստական կադրերից, մենք շրջկոմներում և քաղակոմներում ունենք մոտ 2 հազար հրահանգիչներ : Այդ նույնպես մեծ ուժ ե, յեթե ճիշտ ուղտագործվի : Նըանք նույնպես պետք է զբաղվեն գլխավորապես պրոպագանդիստական աշխատանքով : Առաջ մեր միությունը յերբեք չի ունեցել 4.000 գնարովի պրոպագանդիստ : Յերբեք : Բայց և այնպես մեծանում

պրոպագանդայի դրսել դանդաղ և առաջ շարժվում։ Մենք չենք առում, վոր մեզանում այժմ պրոպագանդան ավելի վատ և դըր-ված, քան թե մինչև 10-րդ համարում արը։ Մենք առաջ ենք շարժվում, սակայն անթույլատրելիորեն դանդաղ։ Խնչո՞ւ։ Միայն այն պատճառով, վոր մինչև այժմ լրջորեն չենք զրադվել պրո-պագանդիստական աշխատանքով, կոմյերիտականների քաղաքա-կան դաստիարակությամբ։ Մենք թերազնահատում ենք կոմյե-րիտմիության մեջ կատարվող քաղաքական աշխատանքը։ Հար-կավո՞ր և արդյոք տաել, վոր կոմյերիտմիության մեջ դեպի պրո-պագանդիստական աշխատանքն յեղած արդպիսի վերաբերմունքը վոչ-կուսակցական վերաբերմունք և։ Բանն այստեղ և հասել, վոր պրոպագանդիստական աշխատանքի համար ՀամլիքելՄ կենտ-րոնական կոմիտեյի բաց թողած միջոցները լիովին չեն ողտա-գործված կոմյերիտմիության կազմակերպությունների մեծ մա-սում։ Կարելի յե մասնավորապես հիշել կուրսկի մարզկոմը, Ռուզբեկոստանի կոմյերիտմիության կենտկոմը, Զելյարինսկի մարզ-կոմը, Յարոսլավի մարզկոմը, Լենինգրադի մարզկոմը և այլն։

Դեպի պրոպագանդիստական աշխատանքն այդ վոչ-բոլցեկ-կյան վերաբերմունքն արտահայտվում և նաև նրանով, վոր տե-ղական կոմիտեները չեն կատարել Համ։ ԱկօթեՄ կենտկոմի վո-րոշումները պրոպագանդիստական կազմերը պատրաստելու մասին։ Բելոռուսիայում 300 պրոպագանդիստի փոխարեն պատրաստված և միայն 190։ Բելոռուսիայի կոմյերիտմիության պրոպագան-դիստների հանրապետական դպրոցի համար հաստատված 400-հոգու փոխարեն, վորոնց ուսուցման համար միջոցներ են ծախս-ված, պատրաստված և 200 հոգի։ Կոլտնտեսությունների և խորհ-ունտեսությունների կոմյերիտական կազմակերպությունների քար-տուղարների դասընթացքներում, վորոնց համար նույնպես մի-ջոցներ են բաց թողնված, 250 հոգու փոխարեն պատրաստված և 3 հոգի։ Բայց յերևութիւն ընկ։ Ավգուստայտիսը, Բելոռուսիայի ԱկօթեՄ կենտկոմի տատչին քարտուղարը, ժամանակ չի ունեցել դրազվելու այնպիսի «մանրունքով», ինչպիսին և պրոպագանդիս-տական կազմերի պատրաստումը։

Գորկու յերկում 800 քաղաքային պրոպագանդիստների փո-խարեն պատրաստված և 368 հոգի։ Պրոպագանդիստների յեր-կըրային դպրոցում 400 հոգու փոխարեն ուսումնական կամացային, իվանովյայի, կուրսունի, Ստալինգրադի և այլ մարզերում։

Ե՛մ մի որինուկ։ Կատարելով ՀամլիքելՄ կենտկոմի 2-րդ:

սղենութիւն վորոշումները, կենտկոմի բյուրոն յերկար աշխատանքներից հետո մշակել և Համեկ(բ)կ պատմության հիմնական մոմենտների ուսումնասիրության ծրագիրը: Պարզվել ե, վորմեզանում այդպիսի աշխատանքի համար միանողամային անբավարար փորձ, գիտելիքներ ենք ունեցել: Այստեղ մեղ մեծ ոգնություն ե ցույց տվել Համեկ(բ)կ կենտկոմը: Համեկնեմը կենտկոմն ամենալուրջ նշանակություն ե տվել այդ ծրագրին և առաջարկել եր մարզկոմների և յերկրկոմների քարտուղարներին, իրենց անձնական պատասխանատվությամբ ապահովել կուսակցության պատմությունն ուսումնասիրող խմբակների՝ նոր ծրադրին անցնելու դեկավարությունը:

Թույլ տվեք Հարցնել: մարզկոմների և յերկրկոմների քարտուղարներից ո՞վ ե անձնապես զրադշել այդ ամենակարևոր և ամենալուրջ դործով: Լավագույն դեպքում զրադշել են առանձին ընկերներ և այդ չնայելով Համեկնեմը կենտկոմի սիստեմատիկ միջամտությանը մի շարք կաղմակերպությունների ուժիատանքին:

ՅՈՒՐԱԳԱՆՉՅՈՒՄ ԱԿՏԻՎԻԱՏ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂ է:

Լենինյան կոմյերիտմիությունն ունի բոլոր պայմանները. քաղաքական-դաստիարակչական և պրոպագանդիստական աշխատանքը և լենինիզմի ուսումնասիրությունը լավ հիմքերի վրա դնելու համար. կան և' պրոպագանդիստական ուժեր և' միջոցներ: Բայց և այնպես, արդյունքներն աննշան են:

Խչո՞ւ: Այդ բացարձում ե նախ նրանով, վոր դեկավարակտիվը մինչև այժմ իր ուշադրության կենտրոնը չի դարձել կոմունիստական դաստիարակության և յերիտասարդության մեջ կատարվող քաղաքական աշխատանքի հարցերը: Մեր դեկավար ընկերները զբաղված են ինչով ասես, միայն թե վոչ պրոպագանդայով և քաղաքական աշխատանքով, հաճախ այն ամբողջովին վերավստահում են պրոպագանդիստներին, այն ել յերեսն վատ պրոպագանդիստների: Մարզային կոմիտեների և ազգային հանրապետությունների կենտկոմների առաջին քարտուղարներներենց համարում են ամեն ինչ դիտեցող և դերավասում են զրադշել անհամար նիստերով ու գրասենյակային զրադրությամբ: Կոմյերիտական դեկավարները ձեռք չեն բերել քաղաքական-դաստիարակչական աշխատանքի ճաշակ, դեպի այն վեր-

բերգում են արհամարհաբար, փորձում են մնալ նախկին դիրքերում, զբաղվելով այսպես կոչված՝ ընդհանուր դեկավարությամբ։ Մեր շատ զեկավար աշխատողները դադարում են յերիտասարդության մեջ կուսակցության քաղաքական աշխատողներ լինելուց և կորցնում են քաղաքական հոգառությունը։ Մեղանում առկա յէ կոմյերիտմիության դեկավար աշխատողների կարվելը քաղաքական աշխատանքից, վորի հետևանքով նրանք գոռնում են նեղ պրակտիկներ, վորոնց մասին մի ժամանակ խոսել ե ընկեր Ստալինը։ Հեռանալով քաղաքական աշխատանքի դեկավարությունից, հեռանալով կոմյերիտականների քաղաքական դաստիարակության խնդիրներից, կոմյերիտական ակտիվիտը սկսում և աշխատել ապարդյուն, շաղակրատել, նիստեր ուժնալ, դաստիարակչական աշխատանքը բարդելով յերկրորդական աշխատողների վզին։

Հիմա մեզ համար պարզ ե, վոր թե՛ պըսպագանդիստական և թե՛ քաղաքական-դաստիարակչական աշխատանքի թերազնահատման դեմ մղվող պարզաբը պետք եր սկսել մարզկոմներից, յերկրկոմներից և ազգային հանրապետությունների կոմյերիտմիության կենտրոններից, այսինքն այդ կոմյերիտների առաջին քարտուղարներից։ Մենք այդ հաշվի շառանք։ Քննադատում եյինք Արշկոմների, քաղկոմների քարտուղարներին, քննարկում եյինք նրանց սխալները և իր ժամանակին չնկատեցինք, վոր խոչընդոտ և հանդիսանում հենց մարզկոմների, յերկրկոմների, ազգային հանրապետությունների կոմյերիտմիության կենտրոնների վուճիւտ վարքադիծը։ Այժմ դա պարզ ե մեզ համար։ Հետևաբար մենք կաշխատենք հնարավորին չափ շուտ ուղղել դրությունը։ Յեթե մենք կարողանանք լիկվիդացիայի յենթարկել քաղաքական դաստիարակչական և պրոպագանդիստական աշխատանքի թերազնահատումը մարզային, յերկրային, հանրապետական կոմյերեների առաջին քարտուղարների կողմից, այդ դեպքում զգալիորեն կրաքելավմի պրոպագանդային դրվածքը կոմյերիտմիության մեջ։ Այս ե, ընկերներ, կենտրոնի առաջիկա աշխատանքի խընդիրներից մեկը։

Կոմյերիտմիության մեջ քաղաքական-դաստիարակչական աշխատանքի բարելավման վոչ պակաս խոչընդոտն ե մեր շատ ակարիվիստների քաղաքական ցածր մակարդակը։

Զայներ տեղերից — ծիլտ ե։

Մի քանի ընկերներ պրոպագանդիստական աշխատանք չեն

կատարում նաև այն պատճառով, վոր վախենում են իրենց կե-
սադրագիտության մերկացումից:

Զայներ.—Ճիշտ ե:

Փոխանակ համառորեն և ամեն որ սովորելու, բարձրացնե-
լու սեփական մակարդակը, առանց վորի առհասարակ աներեւա-
կայելի յե կոմյերիտական ղեկավար աշխատանք կատարելու,
նրանք գերադասում են խուսափել քաղաքական դատութարակու-
թյունը ղեկավարելուց: Այդպես ավելի հանդի՛ստ կլինի...

Իւարկե, մեզանից շատերին պակասում են գիտելիքները: Սա-
կայն ամեն մեկը պետք և գործնական հետևություններ անի
դրանից և վոչ թե թաղցնի այդ թերությունը: Այդ չես կարող
թաղցնել: Գաղտնիք չե, վոր տեղ-տեղ կոմյերիտականներն
ակսում են գերազանցել իրենց ակտիվիտաններին:

Զայներ.—Ճիշտ ե, այդպիսիները շատ են:

Այդ լինում ե այն պատճառով, վոր ակտիվիտաններն ամա-
չելով լուսմ են իրենց կիսազրադիտության մասին, միջոցներ
ձեռք չեն առնում իրենց ուսումը կազմակերպելու համար, իրենց
նկատմամբ չեն անում ամենահասարակ, գործնական հետևու-
թյունները:

Այսպես ուրեմն, մենք ի՞նչ պետք ե անենք կոմյերիտմիու-
թյան մեջ կատարվող քաղաքական-դաստիարակչական աշխա-
տանքի և պրոպագանդայի բնագավառում:

Առաջին՝ ջախջախել կոմյերիտմիության մեջ կատարվող՝ քա-
ղաքական դաստիարակության թերազնահատությունը, վոր ցու-
ցարերվում ե դլխավորապես ղեկավար կոմիտեների առաջին
քարտուղարների կողմից: Մեր ակտիվի ուշադրությունը նեղ-
պրակտիկ խնդիրներից դարձնել ղեկի քաղաքական-դաստիարակ-
չական աշխատանքի ղեկավարությունը, մեր յերկրի և կուսակ-
ցության քաղաքական կյանքի հիմնական հարցերի ըմբռնումը:

Եերկրորդ՝ սիստեմատիկորեն բարձրացնել հենց կոմյերիտա-
կան ակտիվի քաղաքական մակարդակը, առանց վորի հնարավոր
չե քաղաքական-դաստիարակչական և պրոպագանդիտական լայն
աշխատանքը կոմյերիտմիության մեջ: Միևնույն ժամանակ ան-
հրաժեշտ ե լավագույն կոմյերիտականների միջավայրից ներ-
գրավել նոր ուժեր՝ քաղաքական-դաստիարակչական պշտամանքը
տանելու համար:

Մեզանում, ի միջի այլոց, դոյլություն ունի այն սիսակ
պրակտիկան, վորով քաղաքակի ղեկավարման համար նշանակ-

վում են միայն կուտակցության անդամները և թեկնածուները : Իմ կարծիքով, յուրաքանչյուր ստուգված ընկեր, վորը նվիրված է կուտակցության գործին, քաղաքականապես գրագետ կոմյերի-տական ե, կարող է կատարել այդ աշխատանքը :

Տեղից .— ծիչա ե, ծրագրում արձանագրված ե այդ :

Մբագրում արձանագրված ե, սակայն կյանքում այդ չկա :

Յերրորդ. ձգտել, վորպեսզի կոմյերիտմիության ամբողջ ակտիվը, մարդկումների, յերկրկումների և աղջային հանրապետությունների կոմյերիտմիության կենտկումների քարտուղարներից սկսած, պրոպագանդիտական աշխատանք կատարի անմիջականորեն սկզբնական կաղմակերպություններում, քաղիմրակենքում, պրոպագանդիստների սեմինարներում և այլն :

Չորրորդ. փոխել կոմյերիտմիության մեջ տրոցկիստների գեմ պայքարելու մեթոդները, յելակետ ունենալով այն հայտնի ցուցումները, վոր ընկեր Ստալինը տվել է Համելի (ր) կ կենտկոմի պլենումում իր զեկուցման և յեղբափակման խոռքի մեջ : Տրոցկիստներին պետք է համարել վոչ իրեւ քաղաքական հասանք բանվոր դասակարդի մեջ, ինչպիսին նա զեռմս յեղել և 7—8 տարի առաջ, այլ իրեւ վարդական մարդասպաններ, լրտեսներ, դիվերսանտներ և ոտարերկրյա հետախուզությունների գործակալներ : Թե՛ կոմյերիտականներին և թե՛ յերիտասարդությանը լայնորեն պարզաբանել ժամանակակից տրոցկիզմի եյությունը :

Հինգերորդ. ապահովել քաղաքական աշխատանքն ուսանող յերիտասարդության մեջ : Դա մոռացված ճակատամաս ե : Ամենից առաջ պետք է հաօնել այն բանին, վոր ուսանող յերիտասարդությունն անցնի կուտակցության պատմության, լենինիզմի հարցերի, հասարակական գիտությունների ուսումնական ծրագրերը : Անհրաժեշտ է ուսանողական միջավայրում լիկվիդացիայի յենթարկել սխալ վերաբերմունքը դեպի հեղափոխական թերիտյի ուսումնասիրությունը : Դրանով արտահայտվում են մերկ տեխնիցիզմի արածադրությունները, վորոնք ուսանողությանը խանգարում են՝ ձեռք բերելու քաղաքական գիտելիքներ, բարձրացնելու իրենց քաղաքական գրագիտությունը :

Վեցերորդ. լենինյան կոմյերիտմիության ամբողջ աշխատանքում յելակետ դարձնել կադրերի քաղաքական պատրաստման և բոլշևիզմին տիրապետելու լողունգը, վորն առաջադրել է ընկեր Ստալինը : Հենց յերիտասարդությունն ե, վոր ամենասուր պահանջ է զգում բոլշևիզմին տիրապետելու, լենինիզմի

Հիմունքներն ուսումնասիրելու։ Յեզ այդ միանգամային պարզ եւ Ընդհատակում մենք չենք յեղել, բարիկադներում նույնպես, քաղաքացիական պատերազմի ճակատներին մեղանից շատերը չեն մասնակցել, շատ կոմյերիտականներ իրենց հասակի պատճառով չեյին կարող անցնել այն պայքարի դալրոցը, վոր կուսակցությունը մղել եւ լինինիդմի թշնամիների դեմ։

Յոթերորդ. Հարկավոր եւ կուսակցության որինակով յուրաքանչյուր կոմիտեյի քարտուղարին, սկսած սկզբնական կազմակերպությունների կենտրոնները, վերցնել յերկու տեղակալ։ Միաժամանակ հարկավոր եւ ձեռնամուխ լինել կոմյերիտական ակտիվի լուրջ պատրաստության։

Յեզ, վերջապես, պետք եւ վերականգնել ընթացիկ քաղաքականության հարցերի, ինչպես նաև միջադղային և ԽՍՀՄ-ի ներքին դրության հարցերի քննարկումը սկզբնական կազմակերպությունների ժողովներում և կոմյերիտական ակտիվի ժողովներում։ Այդ հարցերի քննարկումը պակաս նշանակություն չունի, քաղաքական-դաստիարակչական աշխատանքի համար։

Հենց այն պատճառով մեր ակտիվիստի համար յերբեմն դժվար եւ լինում պատասխանել ընթացիկ քաղաքականության վերաբերող հարցերին, վոր մենք մոռացել ենք, թե անհրաժեշտ եւ ընդհանուր քաղաքական հարցերը քննարկել կոմյերիտականների ժողովներում, կոմյերիտական ակտիվի ժողովներում։

III. ԱՌԱՆՁԻՆ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ԱՊԱՐԱՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

Համլկյեմ կենտկոմի ապարատի աշխատանքում յեղած թերությունները նման են այն թերություններին, վոր կան տեղական կազմակերպություններում։ Այդ, ամենից առաջ, պրոպագանդիստական աշխատանքի նկատմամբ թույլ դեկավարությունն ե։ Համլկյեմ կենտկոմի բաժինները, որինակ, բանվոր յերիտասարդության բաժինը և ուսանող յերիտասարդության բաժինը, այժմ դրեթե չեն զբաղվում պրոպագանդայի և քաղաքական դաստիարակության հարցերով։ Հավանաբար, այդ բաժինների աշխատողները յելնում են նրանից, թե, ահա, ստեղծված և պրոպագանդայի հրահանգիչների ապարատ։ Դրանք սիսալ յենթադրություններ են։ Պրոպագանդայի և քաղաքական դաստիարակության հարցերով պարտավոր ե զբաղվել Համլկյեմ կենտկոմի ամբողջ ապարատը և նրա յուրաքանչյուր բաժինը։

Եերկրորդ խոչը թերությունը—այդ գյուղական յերիտասարդության բաժնի թույլ աշխատանքն ե։ Կոլտնտեսային կոմյերիտամիության հարցերով նա շատ քիչ և զբաղվել։ Վերջերս մենք այդ սկսել ենք ուղղել։

Կենտրոնական կոմիտեի բաժինների աշխատանքի ընդհանուր թերությունը նաև այն ե, իմ կարծիքով, վոր նրանք հարկ յեղած ոպերատիվ ազգեցությունը չունեն մարզային, յերկրային և հանրապետական կոմիտեների ամենորյա պրակտիկ աշխատանքի միջա։

Բայց դրա փոխարեն կենտկոմի բաժինների վարիչները հաճությամբ հրավիրում են ամեն տեսակի խորհրդակցություններ, վորոնց մեծ մասն ուղղակի ավելորդ ե։

Համլկյեմ կենտկոմի պատասխանառու հրահանգիչները միշտ չեն, վոր ճիշտ են ուղարկործվում։ Նրանցից վոմանց մոտ նկատվում է կազմակերպության մեջ անպայման ինչ-վոր մի բան քրքրելու ձգտում, վորպեսզի այնուհետեւ նրանք այդ ամենը

պղատկերեն վաս լույսի տակ։ Յերբ արդեն այդ նրանց հաջող-
վում եւ, նրանք իրենց Փունկցիաները համարում են կատարված։
Բայց հրահանգիչների յերկրորդ խոմբը տառապում եւ վոչ պա-
կաս լուրջ պակասությամբ։ Նրանք բարեխղճորեն մեկնում են
կաղմակերպությունները, կատարում են Հանձնաբարությունները
և յս-ինչ տեղից մինչև զյու-ինչ տեղ՝ և կոմյերիտականների կյան-
քի այս կամ այն բնապալառում նոր վոչինչ չեն նկատում։

Կանանց սեկառորը, կենտկոմի քարտուղար ընկ. Վասիլյեվսյի
դիխավորությամբ, վերջերս թույլ եւ իրեն դրսենորում։ Այդ
սեկառորն ունի կին յերիտասարդության հետ իր կապերը կորց-
նելու ռեալ վտանգ, վորի հետևանքով կին յերիտասարդությանը
հուղող հրատապ հարցերն իրենց արտացոլումը չեն դժոնի կենտ-
կոմի աշխատանքում։

Ինչ վերաբերում եւ պիոներբաժնին, ապա նրա աշխատանքի
մասին կարելի յեւ դատել պիոներական կաղմակերպության ան-
բավարար դրությամբ։ Այդ բաժինը, յես կասեյի, աշխատում է
վոչ լուրջ։ Բավականաշատ շատ են խոսում ամեն առիթով և ա-
ռանց առիթել։

IV. ԶԳԱՑՈՒՆ ՎԵՐԱԲԵՐՎԱԾՎԱԼ ՅՈՒԻՐԱԳԱՆՉՑՈՒՐ
ԿՈՄՑԵՐԻՏԱԿԱՆԻՆ

Ինչպես հայտնի յեւ, կոմյերիտական կազմակերպություններին նպատակ է դնում յերիտասարդ մարդկանց դաստիարակել կոմունիզմի վորով, Համեկ(բ)կ-ին և նրա ստալինյան կենտկոմին ավերված լինելու վորով։ Իսկ դրանից յենթադրվում է, վոր կոմյերիտամիության մեջ ավելի, քան վորեւ այլ կազմակերպության մեջ, պետք է տեղ գտնի զգայում, ուշադիր, հոգատար վերաբերմունք դեպի մարդիկ, այսինքն անհատական վերաբերմունք։ Առանց դրան կոմունիտատական դաստիարակության մասին խոսք լինել ել չի կարող։ Ընկեր Ստալինն իր յեղբափակման խոսքի մեջ՝ Համեկ(բ)կ կենտկոմի փետրվարյան ողենումում, խիստ քննադատության յենթարկեց ձեւական, անհոգի, բյուրոկրատական վերաբերմունքը դեպի կուսակցության առանձին անդամների բախտը, այս կամ այն արարքի համար նրանց վրա դրվող տուրժերի մասին հարցերը վորոշելու ժամանակ։ Այդ անհոգի և ձեւական բյուրոկրատական մոտեցումը կազմակերպության առանձին անդամների բախտի նկատմամբ ավելի մեծ չափով անհանդուրժելի յեւ կոմյերիտամիության մեջ։

Անհատական մոտեցում—ահա դաստիարակության դվիսավոր պայմանը։ Բայց այդ դվիսավոր պայմանը մեր շատ ընկերներ մոռացել են։ Նեկավարներից վոմանք կոմյերիտականներին դլուխներով են հաշվում։ Յուրաքանչյուրին առանձին կոնկրետ մոտեցում ունենալու փոխարեն, դործադրվում է համախառն, ընդհանուր մոտեցում։ Այդ արտահայտվում է նրանում, վոր այս կամ այն արարքը կատարող կոմյերիտականի նկատմամբ վորապես ուղղման միջոց անպայման դործադրվում է վտարում կոմյերիտամիության շարքերից, հաճախ ել՝ հեռակա կերպով։ Կոմյերիտամիությունից վտարումով պատժել մենք կարող ենք միայն իսկապես փչացած, անուղղելի մարդկանց կամ թշնամիներին։ Իսկ մասցածներին մենք պետք է դաստիարակենք, վերադաստիարակենք, իհարկե, չհրաժարվելով մեղադրվող կոմյերիտա-

կանների նկատմամբ տույժի միջոցներ տալուց : Բայց ինչո՞ւ մեր ընկերները կարծում են, թե վորպես տույժի միջոց հարկավոր և դարձագրել միայն վտարումը : Այդ ճիշտ չեւ :

Հեռացնում են այ ու ձախ՝ պատիվության համար, միաւ թենական պարտականությունները չկատարելու համար, անդամավճարներ չմուծելու, ժողովներ և քաղյամբակներ չհաճախելու համար : Շատ ընկերների հանում են հաշմից, վորպես «մեխանիկորեն հեռացվածի» : Բայց վորում դատում են այսպես. զե՞հ, ի՞նչ կա վոր, կոմյերիտմիությունը բազմամիլիոն կազմակերպություն ե, դրա համար նրա հետ վույնչ չի պատահի, յեթե նա ազատվի հարյուրավոր կամ հազարվոր կոմյերիտականներից :

ԱՄՐԱՑՆԵԼ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ել ի՞նչ խոսել առանձին կոմյերիտականների մասին: Մինչեւ կենտրոնական կոմիտեն մարզկոմների, յերկրկոմների քարտուղարների ուշադրությունը չհրավիրեց, նրանք հանդիսատ հաշտվում եյին ամրող կոլտնտեսային սկզբնական կազմակերպությունների անհետացման հետ: Գոյություն ունի կոլտնտեսային փոքրաթիվ կազմակերպություն 3—5 հոգուց, համաձայն Համեկօթել կանոնադրության: Այսպես, չքիկոմները ողեկավարության հարմարության համար սկսեցին մի քանի այդպիսի կազմակերպություններ միացնել և դարձնել մեկ կազմակերպություն, այսինքն պարզապես խախտել կանոնադրությունը: Դա փոքրաթիվ կազմակերպությունների այսպես կոչված՝ խմբելն ե: Նրանցից շատերն այդ փոփոխությունների հետևանքով ընդհանրապես քայլարդել են:

Խորհուրդների առաջիկա ընտրությունների կազմակցությամբ, անհրաժեշտ ե առանձնապես ուշադիր կերպով դրազվել կոմյերիտմիության կոլտնտեսային սկզբնական կազմակերպություններով, ինչպես նաև կոմյերիտմիության դյուդական ըրքի կոմի աշխատանքով: Գյուղում կա կոմյերիտմիության 97 հազար կոլտնտեսային սկզբնական կազմակերպություն, —այստեղ, ուր չկան կուսկազմակերպություններ: Ինքներդ դատեցե՞ք, թե խորհուրդների առաջիկա ընտրություններում ինչպիսի նշանակություն կունենան կոմյերիտմիության կոլտնտեսային կազմակերպություն կունենան կոմյերիտմիության կոլտնտեսային կազմակերպությունները :

Հարկավոր ե սկզբնական կազմակերպությունների քարտուղարներին մանրակրկիտ կերպով հրահանգել հատկապես այնտեղ, ուր չկան կուսկազմակերպություններ : Այնուհետև նրանց պետք է ցույց տալ համապատասխան ողջությունը ապահովել նրանց վարքի կուսակցական ղեկավարությունը խորհուրդների ընտրությունների նախապատրաստության ընթացքում և հենց ընտրությունների մոմենտին : Շատ բան կախված կլինի գյուղական շրջկոմի աշխատանքից : Իր այժմյան դրությամբ նա չի կարող ապահովել յերիտասարդության ղեկավարությունը : Գյուղական կոմիտեյի քարտուղարին վոչ վոչ չի ողջում, նրան վոչ վոչ չի հրահանգում, և միևնույն ժամանակ նրա վրա դնում են տառնյակ պարտականություններ, պահանջում են պատասխանատու լինել ուղղակի այն ամենի համար, ինչի հետ գործ ունի կոմիտերիտությունը : Եթզկոմի բաժինները մնում են մի կողմ, պարտառ գիմազրկվում ե :

Գյուղը շրջկոմները, վորպես կանոն, կատարում են ուրիշ շատ կազմակերպությունների աշխատանքը, փոխարինում են նրանց, իսկ մարզկոմները և յերկրկոմները հաճախ նպաստում են դրան, ՊԱՁԼ-Ավիաքիմի, Ֆիզկուլտուրային կազմակերպությունների, Կարմիր Խաչի, ՄՊՊԲ-ի և նույնիսկ արքեստի գործերի լիազորների աշխատանքի պատասխանատվությունը դնում են անհատապես կոմյերիտության գյուղը շրջկոմի քարտուղարի վրա :

Զայնը .—Կա այդպիսի մեղք :

Այդ կազմակերպություններից ուղարկվող թղթերի մեծ մասը հասցեյացրվում է կոմյերիտության շրջկոմին, —քարտուղարի անձնական պատասխանատվությամբ մակարությամբ : Ահա թե բանն ինչպիսի այլանդակության և հասնում : Ի դեպ ասած՝ զանազան հասարակական կազմակերպություններին և պետական որդաններին կոմյերիտության կողմից այդ կերպ փոխարինելը տարածված է լայն չափով : Այսպես, որինակ՝ մենք հաճախ փոխարինում ենք ՊԱՁԼ-Ավիաքիմի կազմակերպություններին, աշխատում ենք նրանց փոխարին, մինչդեռ պարտավոր ենք աշխատել նրանց միջոցով, նրանց ողտագործել յերիտասարդության դաստիարակության համար :

Արդյոք այդ պատճառով չե՞ն, վոր կոմյերիտության շրջկոմների քարտուղարները հանդիսանում են շրջանային կենտրոնում մերթ աղբօտեխնիկական ձեռնարկումների, մերթ զարնանացանի կապակցությամբ կուլտուր-լուսավորական աշխա-

տանքի ուժեղացման, մերթ կինո-ֆեստիվալի, մերթ սպարագ-կիաղայի կամ ոլիմպիադայի բազմաթիվ «շտաբների» մշտական նախագահները։ Հաշվի առեք, վոր յուրաքանչյուր «շտաբ» նիստ և ուժենում ու գրում։ Զանազան կազմակերպությունների հավաքագրողները մորիկիացիայի վերաբերյալ իրենց ցուցակներով պաշտում են գյուղացիումի քարտուղարին։ Յեվ վոր ամենից ապղեցուցիչն ե, այդ բոլորն արվում և մարզկոմների և յերկըր-կոմների գիտությամբ և Համաձայնությամբ։ Ամելին, մարզկոմ-ները և յերկըրկոմներն առանց պատճառի գյուղացիումի քարտու-ղարից պահանջում են զանազան հաշվետվություններ և ամփո-փաղըներ, տեղեկություններ և ղեկուցաղըներ և դարձյալ անձնա-կան պատասխանատվությամբ։ Իսկ Վիճնիցայի մարզկոմը, որի-նակ, այնտեղ եր հասել, վոր կոմյերիտմիության շրջկոմի մի-քարտուղարից պահանջել եր կինո-ֆեստիվալի բոլոր մասնակից-ների պերսոնալ ցուցակը, իսկ այդ մասնակիցների թիվը 12 հա-դարից ավելի յեր։

Ընտրական նոր սիստեմով կատարվելիք խորհուրդների ընտ-րությունների նախապատրաստության կազմակցությամբ պետք և գյուղական շրջկոմներին ազատել ավելորդ «զարտասիանատվու-թյունից» և մտացածին պարտականություններից, նրանց համար ամեն կերպ գյուրացնել կոմյերիտականների և յերիտասարդու-թյան մեջ քաղաքական-ըստիարակչական աշխատանք կատարե-լու պայմանները։

Կոմյերիտմիության աշխատանքը վերակառուցելով Համեկ(ը) կենտրոնի պլենումի վորոշումների վողով, մենք դրա հետ միա-սին պետք և խորհուրդների առաջիկա ընտրությունների կազմակ-ցությամբ քաղաքական ընդարձակ աշխատանք կատարենք վոչ-կոմյերիտական յերիտասարդության մեջ։ Հարկավոր և գումա-րել կոմյերիտմիության մեջ չըտնվող բանվոր յերիտասարդու-թյան ժողովներ և կոնֆերենցիաներ, յերիտասարդ կանանց հա-մագումարներ, յերիտասարդ ինտելիգենցիայի զանազան կոն-ֆերենցիաներ և խորհրդակցություններ նրա համար, վորպեսզի խորհրդային յերիտասարդության բոլոր խավերին նախապատ-րաստենք առաջիկա ընտրություններին։

Զի կարելի անտեսել մասնավանդ այն յերիտասարդությանը, վորը մինչև այժմ մնացել ե մեր ուշադրությունից դուրս։ Դրանք տանտիրուհներ են, տնային աշխատող կանայք, այն-

յերիտասարդությունը, վոր աշխատում և առևտրական հիմնարկն ներում, տնայնագործական կոռպերացիայում և այլն:

Ուզում եմ նաև դիտողություն անել հակակրօնական աշխատանքի մասին, վորը կոմյերիտմիությունը ծայրահեղ չափով անուշադրության և մատնել: Կոմյերիտական շատ կազմակերպությունները ըստ եյության հրաժարվել են դրանից, այն ժամանակ, յերբ ամեն յերանգի յեկեղեցականներն ակտիվացնում են կրենց գործունեյությունը յերիտասարդության մեջ, մանավանդ յերիտասարդ կանանց մեջ: Արժե՞ արդյոք փառաեր բերել: Հազիվ թե դրա կարիքն զգացվի՞: Պետք և անել մի հետևություն, վերականգնել հակակրօնական պրոպագանդան կոմյերիտմիության մեջ, ամբողջ յերիտասարդության մեջ, մանավանդ կոլտնտեսումն, ազգային և կին յերիտասարդության մեջ:

ԱՆԵԽՂՈՐԾՆ ԿԱՏԱՐԵԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ

Ընտրական նոր սիստեմով կատարվելիք խորհուրդների ընտրությունների և կոմյերիտմիության վերակառուցման կազմակեցությամբ պետք եւ ամեն կերպ ուժեղացնել կուսակցական դեկավարությունը կոմյերիտմիության վրա: Մենք չենք կարող առանց կուսակազմակերպությունների ողնության վերակառուցել կոմյերիտմիության աշխատանքը՝ Համեկ(բ)կ կենտկոմի պղենումի վորոշումներին համապատասխան: Որինակ, վերցրեք կոմյերիտական որդանների ընտրությունների ժամանակ փակ (գաղտնի) քվեարկության հարցը: Առանց կուսակցական կազմակերպությունների ողնության կոմյերիտմիությունը չի կարող հաջողությամբ կատարել այդ բարդ աշխատանքը: Կասկած չկա նաև, վոր կոմյերիտմիության կուսղեկավարության բացակայությունը, թեկուղ հենց այն տեղերում, ուր չկան կուսակազմակերպություններ և առհասարակ կոմյերիտական կազմակերպությունների նկատմամբ կուսղեկավարության թուլությունը, իակտիվացնի մեր թշնամինների գործունեյությունը յերիտասարդության մեջ: Յերևակայեցե՛ք վորեւ հեռաւորը կոմյերիտական բջիջ, վորը չունի բավականաչափ քաղաքական փորձ: Յերևակայեցե՛ք, վոր կոմյերիտականները, որինակ, փորձում են վարչարարություն անել, փոխանտեկ բանիմացորեն բացատրելու: ԶԵ՞ վոր նման հնարավորությունը բացառված չե: 1-2 կոմյերիտականների այդպիսի կոնկրետ սխալը մեզ կորպի ընարողների շատ

քվեներից : Կարելի յե յենթաղընել և մի այլ որինակ , յերբ կամ -
յերիտականները կարող են առհասարակ հեռու մնալ նախընտ-
քական աշխատանքից , գործողությունների ազատություն առլով
թշնամական տարրերին :

Ահա թե ինչու անհրաժեշտ և վաղորոք ուժեղացնել կուտկազ-
մակիրպությունների դեկավարությունը կոմյերիտմիության վրա :

Լենինյան կոմյերիտմիությունն առհասարակ չի պատկե-
րացնում իր աշխատանքն առանց կուտակցական դեկավարության ,
մանավանդ ընտրական նոր սիստեմով կատարվելիք խորհուրդ-
ների առաջիկա ընտրությունների մոմենտին : Պետք և ուղղակի
առել , վոր նոր Սահմանադրության հիմունքով կատարվելիք
խորհուրդների ընտրությունների առնչությամբ մենք չենք կա-
րողանա կանգնել յերիտասարդության դլուխը , յեթե չունենանք
համապատասխան կուտակցական դեկավարություն :

Պետք և կոմյերիտականներին ամեն կերպ բացատրել , վոր
նրանք պետք ե ուշադրությամբ ունկնդրեն կուտակցության ցու-
ցումներին , դեկավարվեն դրանցով , հետեւն այդ ցուցումներին :
Միայն այդ պայմանով մենք կկարողանանք մեր հետեւից առել
յերիտասարդությանը :



ՀԱՄԼԿՑԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ Ի ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱԶԵՎԵՐԸ

ԿՈՄՑԵՐԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ՝ ԸՆՏՐԱԿԱՆ ՆՈՐ ՄԻՍՏԵՄՈՎ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՑԵՎ ԿՈՄՑԵՐԻՏՄՈՒՈՒԹՅԱՆ ՔԱՂԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանաձև ընկ ։ Կոռարեվի գեկուցման առքիվ

ԽՍՀ Միության նոր Սահմանադրություն մտցնելը արմատական շրջադարձ և նշանակում ՀամԼԿՑԵՄ բոլոր կազմակերպությունների աշխատանքում : Այդ շրջադարձի եյտությունն ե՝ յերիտասարդությանն ավելի մեծ չափով ներդրավել յերկրի քաղաքական կյանքի, պետությունը կառավարելու աշխատանքի մեջ, ուժեղացնել յերիտասարդության քաղաքական ակտիվությունը :

Այդ պարտավորեցնում և ՀամԼԿՑԵՄ-ին արմատապես բարելավելու իր քաղաքական-դաստիարակչական ամբողջ աշխատանքը յերիտասարդության մեջ և ուժեղացնում և կոմյերիտմիության պատրսիանատվությունը ՀամԿ(բ)Կ-ի առաջ՝ ԽՍՀՄ ամբողջ յերիտասարդությանը կազմակերպելու և քաղաքականապես ճիշտ զեկավարելու համար : Խորհուրդների՝ նոր ընտրական սիստեմով կատարվելիք ընտրությունների կազմակցությամբ Լենինյան կոմյերիտմիությունը պարտավոր և ե'լ ավելի մեծ չափով գլխավորել յերիտասարդության քաղաքական ակտիվությունը, կանոննել յերիտասարդության գլուխ և ե'լ ավելի սերտ կերպով համախմբել նրան ՀամԿ(բ)Կ-ի ու խորհրդային իշխանության շուրջը :

Այժմ դրան պատրաստ և արդյոք կոմյերիտմիությունը : Վո՞չ, պատրաստ չե :

Ամենից առաջ ի՞նչ և պահանջվում կոմյերիտմիությունից, վորպեսզի նա կարողանա յերիտասարդության գլուխ կանոննել խորհուրդների առաջիկա ընտրություններին :

1) Դրա համար ինքը Լենինյան կոմյերիտմիությունն իր ամբողջ աշխատանքում պետք է անցկացնի ծավալուն դեմոկրատիա և խիստ կերպով պահպանի դեմոկրատական ցենտրալիզմի հիմունքները, ինչպես այդ պահանջում է ՀամելկեթեՄ կանոնադրությունը։ Դրա համար Լենինյան կոմյերիտմիությունը պետք է կիրառի իր դեկալար որդանների խօսական ընտրականություն վարիչ-վեր, լիովին ապահովի իր աշխատանքի թերությունների քննադատությունը և ինքնաշնադատությունը, պետք է կիրառի կոմյերիտական որդանների հաշվետվություն՝ կոմյերիտական մասսաների առաջ։

Լիովին վերակառուցվե՞լ ե արդյոք կոմյերիտմիությունն այդ դեմոկրատական հիմունքով։ Վո՞չ։

Կոմյերիտմիության կանոնադրությամբ սահմանված՝ կոմյերիտական բոլոր որդանների ընտրովիության փոխարեն լայն կերպով տարածված է կոմյիտեների անդամների կոոպտացիայի՝ յերիտասարդության դաստիարակության դործի համար վնասակար պլրակտիկան։ Կոմյերիտական աշխատողներին ընտրական պաշտոններում հաստատելը և նրանց աշխատանքից հանելը հաճախ տեղի յե ունենում առանց կոմյերիտականների մասնակցության, նրանց թիկունքում։ Բանը հասել ե այնտեղ, վոր կոմյերիտմիության Ստալինդրադի և կույրիշեվի յերկրկոմների բյուրոներն առանց յերկրկոմի պլենումի՝ վոչ վոքի կողմից չընտրված աշխատողներին կոոպտացիայի յեն յենթարկել մարդային կոմիսյի բյուրոյի կազմի մեջ։

Կոմյերիտական որդանների ընտրությունների ժամանակ բացակայում և ինքնաշնադատությունը, կոմյիտեների անդամության թեկնածությունները քննարկվում են զանազան տեսակ նախական խորհրդակցություններում և միայն ձեւականորեն—ժողովներում և կոնֆերենցիաններում։ Քվեարկությունները տեղի յեն ունենում ցուցակներով և վոչ թե անհատապես։

Կոմյիտեների պլենումներն հազվադեպ են հավաքվում։ Շատ պլենումների աշխատանքը փոխարինված է նրանց բյուրոների աշխատանքով։ Զննվում ե սահմանը կոմյիտեյի պլենումի և սովորական, ամենորյա խորհրդակցության միջև։

Յերիտասարդության դաստիարակության խնդիրները համբերատարությամբ բացատրելու և կոմյերիտական աշխատողներին դործնական ողնություն հասցնելու փոխարեն կոմյերիտմիության շատ կազմակերպություններում դերականություն է վար-

շարարությունը, աղմկարարությունը և առանց պատճառի ամեն տեսակ տուրքեր նշանակելը: Քննադատությունը և ինքնաշնագատությունը խեղղվել են և փոխարինվել հանդիսավորությամբ, աղմուկով և գոռողությամբ: Նեկավար աշխատողները չեն ունիղըրել կոմյերիտականների ձայնին: Կոմիտեները հաշվետու չեն յեղել կոմյերիտականների առաջ:

Այս բոլորն անհստափի լիորեն արգելակել և կոմյերիտականների ակտիվության աճը, ՀամԼԿՑԵՄ անդամներին դրկել և նրանց որինական իրավունքներից, կոմյերիտմիության կյանքին մասնակցելուց, կոմիտեների աշխատանքի վրա վերահսկողություն ունենալուց, և դրանով խոկ խախտվել են ճիշտ փոխհարարերությունները զեկավարների և կոմյերիտականների միջև:

Դեմոկրատական ցենտրալիզմը փաստորեն փոխարինված եր մի տեսակ բյուրոկրատական ցենտրալիզմով, վորը հասցրեց կոմյերիտական շատ ակտիվիտաների բյուրոկրատացմանը, նրանց կարվածությանը կոմյերիտական մասնաներից, կոմիտեների ապարատների կտրվածությանը կոմյերիտականներից և առավել ևս՝ վոչմիութենական յերիտասարդությունից:

Կազմակերպական այս խոշորագույն թերությունները և կոմյերիտմիության մեջ տարկող քաղաքական աշխատանքի անբարար վիճակը, պատշաճ քաղաքական զգացածության բացակայությունը, ինքնահանդատացումը, մարդկանց լուրջ ստուգման պակասը նրանց աշխատանքի առաջ քաշելիս, ավելորդ դյուրահավատությունը հեշտացրին դիմակավորված տրոցկիստական, բուխարինյան և այլ յերկերեսանիների սողոսկումն առանձին կոմյերիտական կազմակերպությունների մեջ:

Գլխավորապես այդ պատճառների հետևանքով միայն հնարավոր դարձավ ժողովրդի բացահայտ թշնամի ՅերոՓիցկու որոցկիստական աշխատանքը, վորը (ՅերոՓիցկին) սողոսկել եր կոմյերիտմիության Ազով-Աևծովյան յերկրային կազմակերպության առաջին քարտուղարի պաշտոնի մեջ և կարողացել եր անօրդել կերպով իր շուրջը հավաքել այնպիսի մարդկանց, վորոնք նրա հետ միասին գաղտնի քայլայիչ աշխատանք երին տանում խորհրդային իշխանության և Համկ(բ)կ-ի դեմ:

2) Յուրացնելով, վոր 10-րդ համազումարի վորոշման համայն դլխավորը դաստիարակչական քաղաքական աշխատանքն ե, կոմյերիտական կազմակերպությունները գործնականորեն զերծ շտահ հետու յին այդ ինդիքը բավարար կերպով կատարե-

զուց է կոմյերիտական ղեկավար կոմիտեները և նրանց աշխատողներն իրենց ուշադրության կենտրոն չգարձրին այդ աշխատանքը, պերաղասելով զբաղվել ինչով առես, միայն վոչ պրոպագանդայով, ամբողջովին հանձնելով այդ աշխատանքը հաճախ վատ ընտրված և վատ պատրաստված ոլրոպագանդիստներին։ Կոմյերիտամիության մարզային կոմիտեների և ազգային հանրապետությունների կենտրոնների չատ առաջին քարտուղարներ, քաղկոմների և ըրջկոմների չատ քարտուղարներ փոխանակ իրենք բարձրացնելու իրենց քաղաքական մակարդակը, խեղղվում են ամեն տեսակ նիստերում և գրասենյակային դրազդության մեջ, իրենց ցույց տալով արդեն ամենազետ ղեկավարներ։

Ինչո՞վ բացատրել, վոր կոմյերիտական կաղմակերպություններում մինչև այժմ իրականում դեռևս չըջաղարձ չի կատարվել յերիտասարդության կոմունիտատական դաստիարակության աշխատանքի նկատմամբ, փորձելով մնալ առաջվա դիրքերում, դրազդում են ամեն տեսակ հարցերի ընդհանուր ղեկավարությամբ։

Ակներմարձը նրանով, վոր առաջին՝ կոմյերիտական ղեկավարները մինչև այժմ դեռ ճաշակ չեն ձեռք բերել քաղաքականդաստիարական աշխատանքի նկատմամբ, փորձելով մնալ առաջվա դիրքերում, դրազդում են ամեն տեսակ հարցերի ընդհանուր ղեկավարությամբ։

Երկրորդ, նրանով, վոր կոմյերիտական կաղմակերպությունների չատ ղեկավարները չատ հաճախ քաղաքականապես կիսադրագետ մարդիկ են, իսկ, վոր գլխավորն ե, անհոգ են իրենց քաղաքական հետամնացությունը վերացնելու խմաստով։ Լինելով այդ դրության մեջ, կոմյերիտամիության այդ ղեկավարներն անզոր են և ի վիճակի չեն քաղաքական աշխատանք տանելու կոմյերիտականների ըրջանում, իսկ յերբեմն ել պարզապես վախենում են մտնել կոմյերիտականների ըրջանը—խմբակները, դըպքոցները, վորպեսզի այնտեղ շարքային կոմյերիտականների առաջ ցույց չտան իրենց քաղաքական հետամնացությունը։

Փոխանակ զբաղվելու հիմնական դործով՝ յերիտասարդության քաղաքական դաստիարակությամբ, դեռ մինչև այժմ ել կոմյերիտական կաղմակերպություններն իրենց վրա յեն վերցնում պետական հիմնարկությունների և հասարակական, այդ թվում նաև տնտեսական, չատ կաղմակերպությունների աշխատանքը, մեխանիկորեն կրկնում են նրանց աշխատանքը, իսկ յերբեմն ել ուղղակի փոխարինում։ Փոխանակ յերիտասարդության մեջ աշխատանքի վորոշ մասը տանելու Պաջը-Ամիաքիմի որդան-

Ների, ժողովրդական կրթության, առողջապահության բաժինների, Փիզիկուլտ կազմակերպությունների և այլն միջոցներ, կոմյերիտական կոմիտեները, համապետ դյուլղական շրջաններում, յերբեմն գերազանցում են աշխատել նրանց միտիարեն:

Մի շարք կազմակերպություններում, և մանավանդ Ուկրայինայում, ամենորյա աշխատանքը հաճախ փոխարինվել և ամեն տեսակ հնարովի օմասսայական միջոցառումներով՝, դաստիարակչական վոչ մի նշանակություն և առավել ևս քաղաքական իմաստ չունեցող հավաքներով, վորոնք միմիայն արտաքին եւ ֆեկտի համար են:

Պարզ ե, վոր այդ դրությունը հասցրեց նրան, վոր կոմյերիտական շատ զեկավար աշխատողներ դրանով իսկ դադարեցին կուսակցության քաղաքական աշխատողներ լինելուց յերիտասարդության մեջ, կորցնում եյին բոլշևիկյան հոտառությունը, դրանով հեշտացնելով թշնամիների աշխատանքը կոմյերիտումիության մեջ և նրանց թափանցումը յերիտասարդության շրջանը:

3) Բոլշևիկները զտնում են, վոր «ինքնաքննադատության լոգումը մեր կուսակցական գործողության հիմքն ե, պրոլետարական զիկուտատության ամբոցներու միջոցը, կազմերի դաստիարակության բոլշևիկյան մեթոդի հոգին» (Ստալին): Բայ յերեսութիւն, կոմյերիտական շատ ակտիվիստներ դեռևս այդ չեն հասկանում: Այդ պատճառով չե՞ արդյոք, վոր դանազան կոմիտեների և ակտիվների պլենումների գործնական աշխատանքը այդ, թող թույլ տրվի ասելու, «ակտիվիստների» կողմից վեր և ածվում առպարեզի՝ պարծենկուտ, տոնական ճառերի և իրենց զեկավար աշխատողների կարծեցյալ արժանիքները մեծարելու համար, առպարեզի՝ զգմանք առաջացնող ազմկալի վողջույնների և ռապորտների համար: Բոլշևիզմին խորթ, հակառակ՝ այդ ամբողջ պրակտիկան ստեղծում եր առերևույթ բարեհաջողություն, սպանում եր ամեն տեսակ աշալլջության զգացում և ամեններին չեր նպաստում քննադատության և ինքնաքննադատության ծավալմանը:

Բոլշևիկյան համեստությունն ամենահասարակ պահանջն է կոմյերիտական զեկավարի նկատմամբ, իսկ նմանորինակ պլենումները և ակտիվների խորհրդակցությունները վոմանց մեջ դաստիարակում եյին բոլշևիզմին միանգամայն խորթ ստորագրվության և աստիճանահարգության հատկություններ, իսկ

մյուսների մեջ՝ պարծենկոտության և անչափ գոռողամտության
զգացում:

4) Նոր ակտիվի, աճող նոր մարդկանց առաջ քաշելուն կոմ-
յերիտական շատ աշխատողներ և կոմիտեներ մոտենում են ձեւ-
կանորեն, բյուրոկրատորեն:

Աշխատողների ընդունակությունները գնահատելու դորժում
դերակցում են գործամոլական նկատառությունը, իսկ աշխատո-
ղի քաղաքական դեմքը, կամ այն բանը պարզելով, թե վորքան և
նու նվիրված կուսակցությանը, հաճախ չեն հետաքրքրվում:
Կոմյերիտմիության շատ զեկավար աշխատողներ իրենց կաղըն-
քին շնանաշելը դիմակավորում են տեղերում մարդկանց քչու-
թյան մասին վողբալով, իսկ ակտիվը դաստիարակելու և ներ-
քելոց առաջ քաշելու ջանասներ աշխատանքը փոխարինում են «ի-
րենց մարդկանց», բարեկամների և Հայրենակիցների, անձամբ
նրանց նվիրված մարդկանց, իրենց զեկավարների արժանիքները
գովարանող վարպետներ ընտրելով: Ղեկավար կադրերի նմանո-
րինակ «ընտանեկան» ընտրության դեմքում խոսք անդամ չի կա-
րող լինել քննադատության և ինքնաբնակատության մասին:
Այդպիսի ջոկովի յեղանակով կազմված կոմիտեյում կիշխի լի-
ակատար անդորրություն, անտարբերություն ու ընտանեկանու-
թյուն և դրա հետ միասին՝ նեխում:

5) Ղենինյան կոմյերիտմիության ամբողջ աշխատանքը հե-
տապնդում ե մի նպատակ՝ յերիտասարդ մարդկանց դաստիարա-
կումը կոմունիզմի վողով, կոմունիստական կուսակցությանը և
նրա ստալինյան կենտրոնական կոմիտեյին նվիրվածության վո-
ղով: Կոմյերիտմիության մեջ, ավելի քան մի վորևե այլ հա-
սարակական կազմակերպության մեջ, պետք ե ցուցաբերվի ամե-
նազգայուն, ամենաուշագիր և հոգատար ընկերական մոտեցում
մարդկանց, ըստ վորում վոչ թե առհասարակ մարդկանց, այլ
յուրաքանչյուր յերիտասարդ մարդու՝ առանձին: Առանց դրան,
խոսք անդամ չի կարող լինել վորևե դաստիարակության մասին:
Իսկ կոմյերիտական շատ զեկավարներ մոռացել են դաստիարա-
կության այդ գլխավոր պայմանը և իրեւ տույժի միջոցներ կի-
րառում են միմիայն ծայրահեղ միջոցը՝ վտարումը: Նրանց հա-
մար ինչ արժի, չքննելով գործը, չխռուելով այս կամ այն կոմ-
յերիտականի հետ՝ վտարել նրան կոմյերիտմիությունից, և յեր-
բեմն նույնիսկ հեռակա կերպով, տույժ դնել նրա վրա և դարձ-
յալ յերբեմն հեռակա կերպով: Կոմյերիտմիության մի քանի

զեկալվարներ յերեւի կարծում են, թե քանի վոր կոմյերիտմիությունը բաղմամիլիոն կաղմակերպություն ե, ապա վրչինչ չէ պատահէի, յեթե նրա շարքերից վտարվի մեկյերկու հարյուր, իսկ յերեմն ել հազար կոմյերիտական: Յերիտասարդ մարդկանց բախտի նկատմամբ այդորինակ մոտեցումը հակառում է կոմյերիտմիության, վորպես դաստիարակող կաղմակերպության, վորդի եյությանը, և վնասակար, վորչբուկիկյան մոտեցում ե: Նրանք, այդ յերիտասարդ բյուրոկրատները մոռանում են, վոր այդորինակ ապորինի, ընդհանուր, անհոգի վերաբերմունք ցուցաբերելով յերիտասարդ մարդկանց, նրանք վնասում են յերիտասարդության դաստիարակության գործին, դժգոհություն և զայրույթ առաջ բերելով վոչ ճիշտ կերպով վտարված ընկերների մեջ. նրանք մոռանում են, վոր արոցկիստական յերկերեսանիները և մյուս թշնամի տարրերն իրենց ճանկն են դցում այդ զայրացած ընկերներին, խաղում են նրանց արածազբությունների հետ և քարչ են տալիս նրանց իրենց հետևից:

6) Այսանձնապես զեռ թույլ ե կոմյերիտմիության քաղաքական և կաղմակերպական աշխատանքը դյուլում: Փոխանակ ՀամելիթելՄ 10-րդ համագումարի վորոշումից հետո լրջորեն դրազդվելու կոլտնտեսությունների կոմյերիտական կաղմակերպությունների ամրացումով, կոմյերիտմիության մարզկոմները և յերկրկոմներն իրենց աշխատանքը դեռևս սահմանափակում են դվիսավորապես արդյունաբերական ձեռնարկություններով: Ուստի պատահական չե, վոր մի շարք մարզային և յերկրային կաղմակերպություններում կոմյերիտականների թվի աճման փոխարեն կոլտնտեսություններում ստացվել ե նվազում, կոլտնտեսային սկզբնական կոմյերիտական կաղմակերպությունների շատացման փոխարեն ստացվել ե նվազում, իսկ սկզբնական կոմյերիտական կաղմակերպությունների քաղաքական և կաղմակերպական աշխատանքը կոլտնտեսություններում թողնված ե իր բախտին: Կոմյերիտական կաղմակերպությունների զեկավարների այդ վերաբերմունքը մի այնպիսի կարևորագույն խնդրի նկատմամբ, վորպիսին կոմյերիտմիության դյուլական կաղմակերպություններին մշտական ոգնությունն ու զեկավարությունն ե, կարելի յերացատրել միայն դյուլում կոմյերիտմիության աճման ամբողջ կարևորության և անհրաժեշտության, դյուլական բաղմակար յերիտասարդության նկատմամբ նրա քաղաքական աղեցության ուժեղացման ուղղակի թերազնահատումով և մյուս

կողմից, զեկավարների ցանկությամբ՝ աշխատելու այստեղ, ուր ավելի հեշտ ե:

Կոմյերիտմիության կազմակերպական և քաղդասակարակ-չական աշխատանքի այս բոլոր հիմնական թերությունների հաղ-թահարումը գլխավոր պայմանն ե, վորպեսզի կոմյերիտմիու-թյունը խորհուրդների առաջիկա ընտրություններին կարողանա-ամբողջ խորհրդային յերիտասարդության գլուխ կանգնել, յերի-տասարդության ակտիվ կազմակերպողը լինել Համեր (բ)կ և խոր-հըրդային իշխանության լուրջը:

Յելնելով դրանից, ՀամելիթեՄ կենտկոմի պլենումը վորո-շում ե.

I.

1. Վերացնել կոմիտեյի անդամների կոոպտացիայի ողբակ-տիկան և, ՀամելիթեՄ կանոնադրության համապատասխան, լիո-վին վերականգնել կոմյերիտմիության դեկավար որդանների ընտրությունը:

2. Կոմյերիտական որդանների ընտրությունների ժամանակ արգելել ցուցակով քվեարկելը: Քվեարկությունը կատարել յու-րաքանչյուր առանձին թեկնածության նկատմամբ, ապահովելով կոմյերիտականների անսահմանափակ իրավունքը՝ բացարկելու թեկնածուներին և քննադատելու նրանց:

3. Կոմյերիտական որդանների ընտրությունների ժամանակ, սկսած սկզբնական կազմակերպության կոմիտեյի ընտրությու-նից և վերջացրած ՀամելիթեՄ կենտկոմի ընտրությամբ, սահ-մանել փակ (գաղտնի) քվեարկություն:

4. Վերականգնել կոմյերիտական կոմիտեների հաշվետվու-թյունը կոմյերիտականների առաջ, ՀամելիթեՄ կանոնադրու-թյան համապատասխան: Հաշվետվություններն անցկացնելիս, ինչպես և կոմյերիտմիության ամբողջ աշխատանքում, լիովին ապահովել կոմյերիտմիության և նրա դեկավար որդանների թե-րությունների քննադատությունը և ինքնաքննադատությունը:

II.

1. Դատապարտել կոմյերիտմիության քաղաքական, ողբոպա-գանդիտական աշխատանքի թերազնահատման պրակտիկան:

Կաղըրերի քաղաքական դատապարակման ինդիքը, բոլցեկոմին-տիրապետելը, վորն առաջ քաշեց ընկեր Ստալինը, կոմյերիտմի-

ության համար դվիսավորն է : Հենց յերիտասարդությանն և ան-
ըրաժեշտ, ավելի քան վորեւ ուրիշին, տիրապետել բոլլեկիզմին :

2. ՀամլեթեՄ կենտկոմի պլենումը միռականապես դատա-
պարտում է կոմյերիտական աշխատողների վորոշ մասի շրջա-
նում յեղած քաղաքական անհոգության և բարեհոգության տրա-
մադրությունները, վորոնք հանդում են քաղաքական գլխավոր
խնդրի՝ բոլոր և ամեն տեսակ յերկերեսանիների մերկացման և
բնաշնչման թերապեահատմանը :

ՀամլեթեՄ կենտկոմի պլենումն անհրաժեշտ է համարում,
վոր կոմյերիտմիության բոլոր կազմակերպությունները յեռան-
դուն աշխատանք տանեն կոմյերիտական և վոչ-կոմյերիտական
յերիտասարդության շրջանում, բացատրելով արոցկիտական
ճապոնա-պերմանական գործակալների, բուխարինականների և
այլ յերկերեսանիների դավաճանական, լրտեսական և միասա-
րարական գործունեյության դասերը, սրելով յերիտասարդության
հեղափոխական զգոնությունը, դաստիարակելով նրանց ատելու-
թյան, անհանդուրդողության և մարտունակության վոլով՝ հա-
կախորհրդային գործունեյության ու ազիտացիայի ամեն տեսակ
փորձերի նկատմամբ և անհապաղ յեռանդուն հակառարկած
հացնելով թշնամի տարրերին, ովքեր ել վոր լինեն և ինչ տե-
սակ պատրվակներով ել հանդես գալու լինեն նրանք :

3. Սահմանել, վոր լենինիզմի ուսումնասիրության դրվածքի
հարցերին, համեկ(բ)կ պատմության հիմնական մոմենտների ու-
սումնասիրությանը, կոմյերիտականների և վոչ-միութենական
յերիտասարդության մեջ տարվող պրոպագանդայի և ամենորյա-
քաղաքական աշխատանքի գործի կազմակերպմանը պետք և յեն-
թարկված լինի ՀամլեթեՄ բոլոր կոմիտեների և ամբողջ կոմ-
յերիտական ակտիվիկ գործունեյությունը :

4. Վերականգնել ընթացիկ քաղաքականության հարցերի,
ինչպես և ԽՍՀՄ արտաքին և ներքին գրության հարցերի քննար-
կումն սկզբնական կազմակերպությունների և կոմյերիտական
ակտիվների ժողովներում և յերիտասարդության ժողովներում :

5. Պարտավորեցնել կոմյերիտական բոլոր կազմակերպու-
թյուններին՝ ուժեղացնել զեկավարությունը կոմյերիտական
թերթերի, ժուռնալների, կոմյերիտական ամբողջ մամուլի նկատ-
մամբ, խմբագրությունները կոմոլեկտավորել կուսակցականորեն
կայուն, վորակյալ աշխատողներով և բարձրացնել կոմյերի-

տական մամուլի նշանակությունը ՀամԼԿՑԵՄ դաստիարակչա-
կան ամբողջ աշխատանքում :

6. Պարտավորեցնել սկզբնական կոմյերի խռական կոմիտեների քարտուղարներին՝ յերկու ամսվա ընթացքում, ըրջկոմների, քաղկոմների և ոկրուղկոմների քարտուղարներին՝ չորս ամսվա ընթացքում, քաղկոմների, մարզկոմների, յերկրկոմների և աղյա-
յին հանրապետությունների կոմյերի խության կենտկոմների առաջին քարտուղարներին՝ վեց ամսվա ընթացքում իրենց հա-
մար ընտրել և նախապատրաստել 2 տեղակալ, վորոնք ընդու-
նակ լինեն իրոք փոխարինելու իրենց այն հաշվով, վոր կոմյերի խո-
միության սկզբնական կաղմակերպությունների քարտուղարների տեղակալները հաստատվեն ըրջկոմների բյուրոններում։ վոչ-քա-
ղաքային ըրջկոմների քարտուղարների տեղակալները հաստատվեն մարզկոմների, յերկրկոմների բյուրոններում, քաղաքային շրջկոմ-
ների քարտուղարների տեղակալները հաստատվեն քաղկոմների բյուրոններում, հաղորդելով ցուցակը ՀամԼԿՑԵՄ կենտկոմին։
Քաղկոմների, մարզկոմների, յերկրկոմների և ազգային հանրապե-
տությունների կոմյերի խության կենտկոմների քարտուղար-
ների տեղակալները հաստատվեն ՀամԼԿՑԵՄ կենտկոմում։

Հանձնարարել կենտկոմի բյուրոյին մինչև հուլիսի 1-ը մի-
ջոցներ մշակել կոմիտեների քարտուղարների քաղաքական վերա-
պատրաստման համար, սկսած սկզբնական կաղմակերպությունից
և վերջացրած աղդային հանրապետությունների կոմյերի խությու-
թյան կենտկոմների քարտուղարներով, դասընթացներ և դպրոց-
ներ կաղմակերպելու միջոցով։

7. Դատապարտել կոմյերի խության անդամներին, կոմյե-
րի խության աշխատողներին ընդհանուր, վոչ-անհատական մո-
տեցում ցուցաբերելու պրակտիկան՝ նրանց հանցանքները քննե-
լիս, նրանց աշխատանքը դնահատելիս և վերականգնել Համ-
ԼԿՑԵՄ անդամների, ՀամԼԿՑԵՄ ակտիվ աշխատողների նկատ-
մամբ կոնկրետ անհատական մոտեցումը։

III.

1. Նոր ընտրական սիստեմով խորհուրդների ընտրություն-
ների կազմակցությամբ պարտավորեցնել մարզկոմներին, յերկրկոմ-
ներին, ազգային հանրապետությունների կոմյերի խության
կենտկոմներին՝ ամրացնել կոլտնտեսային կոմյերի ամրացներ:

կաղմակերպությունները։ Անցկացնել սկզբանական կազմակերպությունների քարտուղարների խորհրդակցություններ (ըստ շրջանների)՝ նոր ընտրական սիստեմով խորհուրդների ընտրություններին նրանց նախապատրաստելու հարցերի վերաբերյալ։

2. Անցկացնել կոմյերիտմիության վոչ-անդամ բանվոր յերիտասարդության կոնֆերենցիաներ, իսկ հետո նաև ժողովներ՝ խորհուրդների առաջիկա ընտրություններին նրանց մասնակցության հարցերի վերաբերյալ։

3. Կոմյերիտմիության ընարություններից հետո անցկացնել կին յերիտասարդության համագումարներ աղջային հանրապետություններում և մարզերում՝ խորհուրդների ընտրություններին կին յերիտասարդության մասնակցության հարցի վերաբերյալ։

4. Կոմյերիտմիության դյուլական շրջկոմներին կից անցկացնել յերիտասարդ ուսուցիչների, բժիշկների, աղքանումների, անասնաբույժների—յերիտասարդ ինստիդենցիայի—խորհրդակցություններ՝ խորհուրդների առաջիկա ընտրություններին կոմյերիտմիության հետ միատեղ աշխատելու հարցի վերաբերյալ։

5. Համկեցել կենտկոմի պլենումը մատնանշում և կոմյերիտմիության բոլոր կազմակերպություններին, վոր Լենինյան կոմյերիտմիությունը նոր ընտրական սիստեմով խորհուրդների առաջիկա ընտրությունների կազմակցությամբ չաղետք և անցնի յերիտասարդության այն զանազան խավերի կողքով, վորոնք մինչև որս մնացել են սովորի տակ և մեր աղջեցությունից դուրս, այն ե՛ յերիտասարդ տանտիրուհիներ, տնային բանվորուհիներ, առևտորական հիմնարկություններում, կոմունալ ձեռնարկություններում, տնայնագործական-արհետապործական արտելներում աշխատող յերիտասարդություն։

* * *

Կոմյերիտմիության կենտկոմի պլենումն անշեղ ի դեկավայություն և ընդունում Համկ(ր)կ կենտկոմի փետրվարյան պլենումի վորոշումները և դանում և, վոր կուտկազմակերպությունների աշխատանքի թերությունները, վորոնք մատնանշված են պլենումի վորոշումներում, ընկեր Ստալինի զեկուցման մեջ և յեղբափակման խոսքում, լիովին և նույնիսկ ավելի մեծ չափով աեղ են դանել Լենինյան կոմյերիտմիության աշխատանքում։

Համարկությունը կենտկոմը վստահէ ե, վոր Լենինյան կոմյերիտ-
միության բոլոր կաղմակերպությունները, ՀամեԿ(ր)Կ զեկավա-
րությամբ, կարող են բոլցելիկաբար ուղղել իրենց աշխատանքի
թերությունները, վերացնել քաղաքական անհոգությունը, զար-
դացնելով իրենց ամբողջ աշխատանքի քննադատությունն ու ինք-
նաքննադատությունը և խորհրդային յերիտասարդությանն ել ա-
վելի համախմբել ՀամեԿ(ր)Կ, կուսակցության Ստալինյան կենտ-
րոնական կոմիտեի շուրջը:

ԿՈՄՑԵՐԻՏԱԿԱՆ ՈՐԴԱՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅՆԴ,
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բամաձեզ ընկ. և ուկյանովի ի գեկուցման առքիվ

Համլկթեմ կանոնադրությունը նախատեսում և կոմյերիտական որդանների ընտրովիությունը վերից-վար:

Սակայն ընտրությունների դեմոկրատական պրակտիկայի փոխարեն կոմյերիտական շատ կազմակերպություններ կանգնեցն անհամար չափերով կոոպտացիաներ անելու ուղղու վրա:

Կոմյերիտական որդանների կազմի մեջ իրենց կոմյերիտականների կողմից ժողովներում և կոնֆերենցիաներում թեկնածություններ առաջադրելու, նրանց կողմից համակողմանի կերպով քննարկվելու, անհատապես քվեարկելու փոխարեն, կոմյերիտական կազմակերպությունների դեկավարները գերազանցում ենին թեկնածությունների նախական նշումը «ընտանեկան» կարգով, ակտիվի նեղ խմբում:

Ժողովներում և կոնֆերենցիաներում, վորպես կանոն, թեկնածությունների վերաբերյալ վիճարանություններ չեյին բացվում, քվեարկումը կատարվում եր ցուցակներով:

Այդպիսով՝ խախտելով կանոնադրությունը, մի շաբթ կազմակերպություններում ընտրությունները վեր եյին ածվում դատարկ ձևականության, իսկ Համլկթեմ անդամները զրկված եյին թեկնածությունների վերաբերյալ ազատութեան արտահայտվելու հնարավորությունից, այսինքն՝ անընդունելի թեկնածուներին բացարկելու և քննադատելու իրենց որինական իրավունքն ողտագործելուց:

Կոմյերիտական կազմակերպությունների քարտուղարներին նշանակելու պրակտիկան, նրանց փոփոխումը, առանց կոմյերիտականների դիտության և մասնակցության, լայն տարածում և դառել:

Համլկթեմին, վորպես յերիտասարդությանը դաստիարա-

կող կազմակերպության, հաստուկ և կոմյերի խոտական ակտիվի նոր կադրեր առաջ քաշելու և աճեցնելու վրա համառ ու համբերատար կերպով աշխատելը։ Այնուամենայնիվ՝ կոմյերի խոտական կազմակերպությունների ղեկավարներն առաջվա պես ցուցաբերում են անվճականություն և նոր կադրեր առաջ քաշելու յերկոյուղ, շարունակում են շաղակրատել այս կամ այն աշխատողի անփոխարինելիության մասին։

Մարզկոմների, յերկրկոմների և ազգային հանրապետությունների կոմյերի առաջամիության կենտրոմների, քաղկոմների և չրջկոմների շատ ղեկավարներ նվաստացրել են կոմիտեների պլենումների ղերը։ Պլենումների գումարման ժամկետները, վորոնք նախատեսված են միության կանոնադրությամբ, վորպես կանոն, խախտվում եյին։ Պլենումների նախապատրաստումը կատարվում եր մակերեսորեն։ Պլենումների վորոշումներին ձևուկանորեն եյին վերաբերվում, և այստեղից, վորպես կանոն, բացակայում եր նրանց կատարման ստուգումը։

Անթույլատրելի յե այն փաստը, վոր կոմյերի առաջամիության կոմիտեների անվամները, ոկրնական կազմակերպություններից մինչև մարզկոմները, յերկրկոմները և ազգային հանրապետությունների կոմյերի առաջամիության կենտրոմները, չեն ներգրավվում կոմիտեների ամենորյա աշխատանքին, չեն ոգտագործում քննադատելու և կոմիտեների քարտուղարների ու կոմիտեներում աշխատողների աշխատանքին միջամտելու իրենց իրավունքը։

Ակտիվների ժողովները հարմարեցվում են ավելի չուստ վորեն հանդիսավոր առիթի, փոխանակ այդ ժողովներում քննելու կոմյերի խոտական կազմակերպությունների կյանքի քաղաքական և դրանքնական հարցերը։

Ղեկավարության այլպիսի պրակտիկան մի շարք կազմակերպություններում առաջ եր բերում վարչարարության ծաղկում, բյուրոկրատացում և ղեկավարության կտրվածությունը մասսաներից։

Կոմյերի առաջամիության սկզբնական կազմակերպության ժողովն առաջնակարգ նշանակություն ունի Համելիթե՛Մ անդամների գողափարական-քաղաքական աճման համար։

Այնուամենայնիվ կոմյերի խոտական կոմիտեները թույլ տվին ընդհանուր ժողովների ղերի նվազեցում, նրանց փոխարեն հրավիրելով կոնֆերենցիաներ, հերթափոխային և ցեխային ժողովներ։

Ընդհանուր ժողովներում տեղական կյանքի հարցերը հազ-
վագեպ են քննարկվում, հաճախ որակարգը վորոշում են քաղկոմ-
ները և շրջկոմները: Թե ինչ ե արվել ժողովներում ընդունված
վորոշումները կատարելու գծով, վորապես կանոն, կոմյերիտա-
կաններին չեն տեղեկացնում:

Միության կանոնադրությունը նախատեսում և կոմյերիտա-
կան որդանների պարբերական հաշվետվությունն իրենց կոմյե-
րիտական կաղմակերպությունների առաջ:

Ենինյան՝ կոմյերիտմիության մեջ, վորապես դաստիարակող
կաղմակերպության մեջ, կոմյերիտմիության կոմիտեների աշ-
խատանքի լայն հասպարակայնությունը՝ կատարումն իսկապես
ստուգելու, քննադատության և ինքնաքննադատության զարդաց-
ման, զեկավարությունը բարելավելու գործում մասսաների փոր-
ձը հաշվի առնելու պարտադիր պայմանն եւ:

Սակայն փոխանակ ապահովելու իրենց աշխատանքի վերա-
բերյալ կանոնավոր հաշվետվությունը կոմյերիտականների ա-
ռաջ, կոմյերիտական շատ կոմիտեներ վերջին տարիներս բոլորո-
վին դադարիցը են այդ:

Այս աղավաղումներն ավելի լայն տարածում դատան կոմյե-
րիտմիության այն կաղմակերպություններում, վորոնց զեկավա-
րում են յերկաթուղարյին տրանսպորտի, ջրային տրանսպորտի և
խորհանուեասությունների քաղաքացինների կոմյերիտմիության
գծով ողնականները:

Կոմյերիտական բոլոր որդանների ընտրություններին փակ
(գաղտնի) և անհատական քվեարկություն մտցնելը նշանակում
է մինչև վերջ անցնել ՀամելկթեՄ կաղմակերպությունների ծա-
վալում ներմիութենական դեմոկրատիային, ՀամելկթեՄ անդամ-
ների իսկական նախաձեռնությանը և ինքնապործունեյությանը,
նրանց ներգրավմանը միության ակտիվ կյանքին:

Փակ (գաղտնի) քվեարկություն մտցնելը կողնի Համ-
ելկթեՄ-ին՝ մերկացնելու զեռ չմերկացված հակահեղափոխական
արցկիստական, բուխարինյան տարրերին և այլ յերկերեսանե-
ներին, վորոնք սողոսկել են կոմյերիտմիության առանձին կազ-
մակերպությունների զեկավարության մեջ, կողնի գուրս շպրտել
զեկավարությունից քաղաքական բերանքացներին, յերկտասարդ
քյուրոկրատներին, մասսաներից կտրված չինուվնիկներին և շա-
շակրատներին, կապահովի կոմյերիտական կաղմակերպություն-

ների զեկավարների խոկական ընտրությունն ըստ իրենց քաղաքական և դորժարար համկությունների:

Յենելով սրանից, Համեկօն կենտրոնի պլենումը վորոշում ե.

1. Անցկացնել կոմյերիտական մարմինների հաշվետվությունները և ընտրությունները հետեւյալ ժամկետներում:

ա) սկզբնական կազմակերպություններում հունիսի 15-ից մինչև ոգոստոսի 1-ը.

բ) Միջանային, քաղաքային և ոկրուզային կազմակերպություններում ոգոստոսի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը.

գ) մարզային, յերկրային և հանրապետական կազմակերպություններում սեպտեմբերի 1-ից մինչև 20-ը:

2. Սահմանել կոմյերիտական որգանների հաշվետվությունների հետեւյալ կարգը.

ա) սկզբնական կազմակերպությունների կոմիտեները պետք է իրենց աշխատանքի վերաբերյալ հաշվ տան կոմյերիտմիության սկզբնական կազմակերպությունների ընդհանուր փակ ժողովներում: Արգելել սկզբնական կազմակերպությունների հաշվետվությունների փոխարինումը կոնֆերենցիաներով կամ հերթափոխային ժողովներով.

բ) Միջկոմները, քաղկոմները և ոկրուզկոմները պետք ե հաշիվ տան կոնֆերենցիաներում (Միջանային, քաղաքային, ոկրուզային):

գ) մարզկոմները, յերկրկոմները և աղջային հանրապետությունների ԼԿՕՆ կենտրոնական պետք ե հաշիվ տան մարզային, յերկրային կոնֆերենցիաներում և հանրապետական համագումարներում:

3. Կոմյերիտական կոմիտեների հաշվետվությունները նախապետ պետք ե հաստատվելն կոմիտեների պլենումներում: Հաստատված հաշվետվությամբ կարող են հանդիս գալ միայն կոմիտեների անդամները:

Կոմյերիտական կոմիտեները պետք ե հաշիվ տան վոչ թե ընդհանուր գծից համար, ինչպես այդ հաճախ լինում ե, այլ իրենց անմիջական գործնական աշխատանքի համար, այն բանի համար, թե ինչպես են կատարվել անցյալ կոնֆերենցիաների (ժողովների) վորոշումները, գործնականապես ինչ են արել քաղաքական-մասսայական և պրոպագանդիտական աշխատանքի

բարելավման համար, ինչպես են կազմակերպել յերիտասարդության ընդհանուր կրթական և տեխնիկական ուսուցումը, ինչպես և դրված նրա կուլտուրական կարգիների սպասարկման գործը, ինչ գրության մեջ և գտնվում կոմյերիտական տնտեսությունը, ինչ են արել այդ տնտեսությունը կարգի բերելու համար, ինչպես և աճել կոմյերիտական կազմակերպությունը հաշվետուժմանակացըջանում, ինչպես են ողնել կոմյերիտմիության առանձին սկզբնական կազմակերպություններին՝ նրանց ամրացման գործում, ինչպես են աշխատում կոմյերիտական ակտիվիտի հետ, կոնկրետ՝ ինչպես են ողնում պիոններ ջոկատներին, դպրոցին և այլն:

4. Հաշվետու զեկուցումների քննարկման տևողությունը չպետք է սահմանափակվի նախագահության կողմից, այլ պետք է սահմանվի կոնֆերենցիայի (ժողովի) վորոշմամբ այն հաշվով, վոր վիճարանություններում կարողանան հանդես դալ շատ պատզամավորներ:

5. Պատզամավորներից ստացված առաջարկությունների հիման վրա կոնֆերենցիան (ժողովը) պետք է կազմի և հաստատի կոմյերիտական կոմիտեյի հաշվետու զեկուցման վերաբերյալ վորոշումը:

6. Սահմանել այսուհետև կոմյերիտական որդանների՝ կոմյերիտականներին հաշիվ տալու, հետևյալ կարգը.

ա) սկզբնական կոմյերիտական կազմակերպությունների կոմիտեները պետք է հաշիվ տան ընդհանուր ժողովներում 6 ամիսը մեկ անգամ:

բ) շրջկոմները, քաղկոմները և ոկրուգկոմները պետք է հաշիվ տան ժողովներում և կոնֆերենցիաններում տարին մեկ անգամ.

դ) մարզկոմները, յերկրկոմները և ազգային հանրապետությունների կոմյերիտմիության կենտրոնական պետք է հաշիվ տան քաղաքային և շրջանային կոմյերիտական ակտիվների ժողովներում տարին մեկ անգամ:

7. Կոմյերիտական բոլոր որդանների ընտրությունները փակ (գաղտնի) և անհատական քվեարկությամբ կատարելու կապակցությամբ սահմանել, վոր փակ (գաղտնի) քվեարկությամբ ընտրվում են.

ա) սկզբնական կոմյերիտական կազմակերպությունների պատզամավորները — կոմյերիտական շրջանային, քաղաքային

կոնֆերենցիաների համար և կոմյերիտական շրջանային, քաղաքային, ուկրուդային կոնֆերենցիաների պատգամավորները՝ մարդային, յերկրային կոմյերիտական կոնֆերենցիաների և ազգային հանրապետությունների կոմյերիտմիության համապատամարների համար :

բ) ցեխային, տեղամասային, Փակուլտետային կազմակերպությունների խմբային կազմակերպիչները, բյուրոնների անդամները և կոմյերիտական կազմակերպիչները, ուկրուդկոմների, կազմակերպիչները և քարտուղարները (այնուղղ, ուր չկան կոմյերիտական կոմիտեները), շրջկոմների, քաղկոմների, ուկրուդկոմների, մարդկոմների, յերկրկոմների և ազգային հանրապետությունների կոմյերիտմիության կենտկոմների պլենումների անդամները.

դ) կոմյերիտական սկզբնական կազմակերպությունների կոմիտեների քարտուղարները, շրջկոմների, քաղկոմների, ուկրուդկոմների, մարդկոմների, յերկրկոմների և ազգային հանրապետությունների կոմյերիտմիության կենտկոմների բյուրոնների անդամները (ընտրվում են համապատասխան կոմիտեների պլենումներում) :

8. Սկզբնական կազմակերպությունների կոմյերիտական որդուանների ընտրությունները անցկացնել միայն սկզբնական կազմակերպությունների ընդհանուր ժողովներում, արդելելով նրանց փոխարինումը այսպես կոչված կոնֆերենցիաներով :

9. Պարտավորեցնել մարդկոմներին, յերկրկոմներին և ազգային հանրապետությունների կոմյերիտմիության կենտկոմներին՝ հրավիրել կոմյերիտական ակտիվիվ քաղաքային և շրջանային ժողովներ՝ հրահանգներ տալու և կոմյերիտական որդանների հաշվետվությունների և ընտրությունների կարգը նշելու համար :

* * *

Համեկցելու կենտկոմի պլենումը լենինյան կոմյերիտմիության բոլոր անդամների ուշադրությունը հրավիրում ե այն բանի վրա, վոր իրենց ղեկավար որդանների ընտրությունների ժամանակ անհրաժեշտ ե նշել և ընտրել ամենաառաջավոր մարդկանց, վորոնք ստուգված են քաղաքականապես, նվիրված են բոլևիկյան կուսակցությանը, փորձված են գործնական աշխատանքում, մարդկի, վորոնք համար կերպով աշխատանք են իրենց մարդուական լենինյան կրթության վրա:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Համ. ԼԿՑԵՄ կազմակերպությունների նախագահութառությունը խորհուրդների՝ ընտրական նոր սիստեմով կատարվելիք ընտրություններին և ժաղաքական դաստիարակչական աշխատանքի քերությունները կոմյերիտմիության մեջ (ընկ. Կ ո ո ա բ ե վ ի դեկտումը կենտկոմի ԱՊ պլենումում)

5

I. Երշադարձ յերկրի ժաղաքական կյամքում և կոմյերիտմիության մերձավորագույն խնդիրները

7

Վերականգնել դեկավար որդանների ընտրությունը

8

Զախշախել բյուրոկրատական ցենտրալիզմը

10

Առաջ քաշել նոր յերիտասարդ ակտիվ

11

Բոլշևիկյան ինքնաքննադատության և սնապարծ դեկավարների մասին: Քննադատությամբ և ինքնաքըննադատությամբ ամրապնդել ակտիվը

16

Անխնայորեն ջախջախել արոցկիստներին, բուխարէնականներին և այլ յերկերեսանիներին

21

II. Բարձրացնել կոմյերիտական կազմակերպությունների ժաղաքական մարտունակությունը

25

Լիկվիդացիայի յենթարկել վոչկուսակցական վերաբերմունքը դեպի պրոպագանդիստական աշխատանքը

28

Յուրաքանչյուր ակտիվիստ քաղաքական աշխատող և

31

III. Առանձին քերությունները Համ. ԼԿՑԵՄ կենտկոմի ապարատի աշխատանքում

36

IV. Զգայում վերաբերվել յուրաքանչյուր կոմյերիտականին

38

Ամրացնել գյուղական կազմակերպությունները

39

Անշեղորեն կատարել կուսակցության ցուցումները

42

ՀԱՄ. ԼԿՑԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ԱՎԵՆՈՒՄԻ ՊԱՆԱԶԵՆՎԵՐԸ

Բանաձեռնեկ. Կոսարենի դեկուցման առթիվ

45

Բանաձեռնեկ. Լուկյանովի դեկուցման առթիվ

57

Թարգմ. Վ. Զիգենյան

Խմբ. Ս. Կիրակոսյան

Տեխն. խմբ. Ս. Խոչտորյան

Արդարադիմ. Վ. Զիգենյան

Կոնսուլ. արդարադիմ. Լ. Աղավյան

Թիազիլիսի լիազոր Ի-4594, Հըմա. № 451

ԱՄ4

Գաղափեր № 115, Տիրած 10,000, ինչեցք ԲԿ

Հանձնված և արտադրության 28/VI 1937 թ.

Առարտգված և աղազբության 8/VII 1937 թ.

Գինը 50 կ.

Հայկական ճարտարական, Ցերեան, Ալմագերգյան № 71



ԳԻՒԸ-50-ԿԱՊ.

-054.

Կ-25

ՄԵԿ
ՕՐԻՆԱԿ

А. В. КОСАРЕВ

ПОДГОТОВКА ОРГАНИЗАЦИЙ ВЛКСМ
К ВЫБОРАМ В СОВЕТЫ ПО НОВОЙ ИЗВИРАТЕЛЬНОЙ СИСТЕМЕ
И НЕДОСТАТКИ ПОЛИТИКО-ВОСПИТАТЕЛЬНОЙ
РАБОТЫ В КОМСОМОЛЕ

*
РЕЗОЛЮЦИИ III ПЛЕНАРУМА ЦК ВЛКСМ
Аркадиевдат, Ереван, 1937






ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



FL0018917



344
Արքանկ